



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

14 ապրիլի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարգսյանը, Արշակ Սրապյանը, Պավլիկ Պապինյանը և Շուշանիկ Հակոբյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Նաիրա Հարությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Գրիգոր Կարապետյանը, Էմմա Գասպարյանը և Արմենուհի Ոսկանյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սևակ Խաչատրյանը:

Նիստին նեկա էին աշխատակազմի պատասխանատուներ:

Նիստն իրավագոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.10-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և ներկայացրեց թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի N 24 արձանագրությունը, համաձայն որի Փամբակ համայնքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Թիաննա Ռազմիկի Բոջուկյանի մանդատը տրվում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Սերյոժա Արմենակի Եսայանին: Համայնքի ղեկավարը շնորհավորեց Սերյոժա Եսայանին՝

մաղթելով բեղմնավոր և արգասաբեր աշխատանք, ի շահ Փամբակ համայնքի զարգացման և հզորացման:

Ս. Կոստանդյանը առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 12-14-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

12. Արման Հմայակի Զալյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Լևոն Գոգչյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 030-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի ապրիլի 14-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի ավագանու 21.03.2024թ-ի թիվ 016-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու ու իրականացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Փամբակ համայնքի ավագանու 14.06.2022թ-ի թիվ 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

7. Համայնքային արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով, վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 60-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Լոռու մարզի Փամբակ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

12. Արման Հմայակի Զալյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Լևոն Գոգչյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 21.03.2024թ-ի թիվ 016-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու ու իրականացնելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով աղբահանության ծավալների մեծացումը և սպասարկվող գյուղերի թվի ավելացումը, ինչպես նաև օրենսդրական մի շարք փոփոխություններ, անհրաժեշտություն է առաջացել Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու ու իրականացնելու մասին նախկինում հաստատված որոշման մեջ կատարել թարմացումներ, լրացումներ և հաստատել:

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 3-ի:
4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում ոչ կենցաղային աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության՝ համաձայն հավելված 4-ի:
5. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 031-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 14.06.2022թ-ի թիվ 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատվել է 2022թ-ին: Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես վճարումներն անկանխիկ եղանակով իրականացնելու վերաբերյալ և մի շարք այլ փոփոխություններ, անհրաժեշտություն է առաջացել նախկինում հաստատված վերոնշյալ կարգում կատարել թարմացումներ, լրացումներ և հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարման գանձման նոր կարգ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 032-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է եկամուտներում, տեղական տուրքերի «շինարարության թույլտվություններ» տողում ավելացնել 2.732.600 դրամ՝ կապված ապօրինի շինությունների օրինականացման մեծ քանակի հետ, իսկ նվիրատվության տողում ավելացնել 9.933.000 դրամ՝ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի կողմից 2024թ-ին կնքված համաձայնագրով մնացած պարտավորությունը կատարելու համար:

Վերը նշված ավելացված եկամուտներից.

01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվի, 4235՝ կառավարչական ծառայություններ հոդվածում ավելացնել 800.000 դրամ, որպես իրավաբանական ծառայության ծախս:

01.06.01՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններում՝ 5134 հոդվածում ավելացվել է 1.000.000 դրամ՝ նախագծահետազոտական աշխատանքներ պատվիրելու համար:

04.02.01՝ Գյուղատնտեսության նախահաշվի, մասնագիտական ծառայություններ 4241 հոդվածում ավելացվել է 200.000 դրամ՝ «կրծողների դեմ իրականացվող պայքարի» ծառայության մատուցման համար:

Ավելացած եկամուտների 10.665.600 ՀՀ դրամը նախատեսել պահուստային ֆոնդում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 033-Ն/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2025 թվականի մարտ ամսվա ընթացքում Փամբակ համայնքի կողմից ձեռք է բերվել, ինչպես նաև իրականացված ծրագրերի արդյունքում հանձնման-ընդունման ակտերով համայնքին է հանձնվել 4.066.250 ՀՀ դրամի հիմնական միջոց:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 034-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա

Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2025 թվականի վարչական բյուջեի առաջին եռամսյակի եկամուտները նախատեսված (պլանավորված) 171.634.500 դրամի դիմաց փաստացի կատարվել է 197.043.400 դրամ՝ ապահովվելով 114.8 % կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ վարչական բյուջեի եկամուտները պակաս է կատարվել 2.394.500 դրամով՝ կամ կատարողականը կազմել է 98.8%:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 201.000 դրամի դիմաց փաստացի մուտք չի եղել:

2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 21.704.500 դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 37.180.400 դրամ, կատարողականը կազմել է 171.3%: 2024թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ եկամուտները ավել է գանձվել 9.374.700 դրամով կամ կատարողականը կազմել է 133.7 %:

2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացումներ չեն եղել:

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 386.945.200 դրամի դիմաց փաստացի կատարվել են 112.254.100 դրամով, կամ կատարողականը կազմել է 29.0%: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ ծախսերը պակաս է կատարվել 48.000.000 դրամով՝ կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 70%:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 035-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Համայնքային արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է հաստատել համայնքի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը: Սույնով սահմանվում է Փամբակի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների փաստաթղթերի հաշվառման, պահպանման, օգտագործման և արխիվացման կարգը:

Փամբակի համայնքապետարանում և նրա ենթակա կառույցներում պահպանվում են համայնքապետարանի ներքին և արտաքին գործունեության հետ կապված իրավական և ոչ իրավական բնույթ ունեցող փաստաթղթերը, որոնք ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) համայնքում պահպանվում է առավելագույնը 5 տարի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 036-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի ««Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով, վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 60-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է Փամբակ համայնքի ավագանու «12» մայիսի 2022 թվականի ««Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով, վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 60-Ա որոշման 2-րդ կետում «300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ» բառակապակցությունը փոխարինել «566000 /հինգ հարյուր վաթսուվեց հազար/ ՀՀ դրամ» բառակապակցությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 037-Ա/: **Ձեռնպահ քվեարկեց Սասուն Մարանդյանը.**

8. ԼՍԵՑԻՆ - Լոռու մարզի Փամբակ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը: Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից: Համայնքի քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է Փամբակ խոշորացված համայնքի «Լոռի-9» միկրոռեզոնանս մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի, սույն կանոնադրության, ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության, գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 038-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Լյուդվիկ Հրաչի Գևորգյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին առաջարկում է նրան սեփականության իրավունքով պատկանող 06-019-0105-0109 կադաստրային ծածկագրով 0,1007 հա և 06-019-0105-0112 կադաստրային ծածկագրով 0,0978 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության հնդավոր գործառնական նշանակության հողամասերը՝ ջերմոցային տնտեսություն հիմնելու նպատակով, փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 039-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Արման Հմայակի Զալյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արման Հմայակի Զալյանի դիմումը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը, առաջարկում է տալ համաձայնություն Արման Հմայակի Զալյանին ճանապարհի ապահովելու նպատակով Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-036-0496-0003 կադաստրային ծածկագրից 0,031995 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը անորոշ ժամկետով սերվիտուտի իրավունքով օգտագործման տրամադրելուն: Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 040-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Լևոն Ռազմիկի Գոգչյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Լևոն Ռազմիկի Գոգչյանի դիմումը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը, առաջարկում է տալ համաձայնություն Լևոն Ռազմիկի Գոգչյանին և իր ընտանիքին պատկանող տնամերձ հողատարածք մուտքի ու ելքի ճանապարհ ապահովելու նպատակով Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0839-0001 կադաստրային ծածկագրից 0,093978 հա բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը և 06-070-0088-0029 կադաստրային ծածկագրից 0,055207 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողատեսքը անորոշ ժամկետով, սերվիտուտի իրավունքով օգտագործման տրամադրելուն: Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 041-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Էդգար Աշոտի Ասատրյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, առաջարկում է Էդգար Աշոտի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0250-0027 կադաստրային ծածկագրով 0,412548 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը, թռչնաբուծական ֆաբրիկա կառուցելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 042-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի մայիսի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 043-Ա/:

Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի մայիսի 15-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 030-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025թ-ի ԱՊՐԻԼԻ 14-ի թիվ 03 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի ապրիլի 14-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի ապրիլի 14-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Փամբակ համայնքի ավագանու 21.03.2024թ-ի թիվ 016-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու ու իրականացնելու մասին:
3. Փամբակ համայնքի ավագանու 14.06.2022թ-ի թիվ 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
7. Համայնքային արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը հաստատելու մասին:
8. Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով, վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 60-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Լոռու մարզի Փամբակ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:
10. Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նիստերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
12. Արման Հմայակի Զալյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:
13. Լևոն Գոգչյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:
14. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 031-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.03.2024թ-ի ԹԻՎ 016-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3, 4, 5, 6 և 7-րդ կետերով, 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 13-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում ոչ կենցաղային աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության՝ համաձայն հավելված 4-ի:

5. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

6. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 21.03.2024թ-ի թիվ 016-Ա որոշումը:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ Ղ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության իրականացման

Փամբակ համայնքի աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:

Աղբի հեռացումը Փամբակ համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի սեփականություն հանդիսացող GAZ SAZ-3507 մակնիշի ինքնաթափ բեռնատարի, MAZ KO-449-41438121-540-001 մակնիշի ինքնաթափ աղբատար մեքենայի, նվիրատվությամբ ստացված MAZ մակնիշի ինքնաթափ աղբատար մեքենայի միջոցով, շաբաթական 6 անգամ շրջիկ եղանակով անհատական, Փամբակ համայնքի վարչական բնակավայրերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբը պետք է հեռացվի մինչև աղբատար մեքենայի ամբողջությամբ լցվելը: Աղբատար մեքենան պետք է ենթարկվի ախտահանման ախտահանիչ լուծույթով:

Փամբակ համայնքի վարչական բնակավայրերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված ինքնաթափ բեռնատար մեքենայով, բնակիչների կողմից հավաքված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Փամբակ համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ Բագում, Ազնվածոր, Լեռնապատ, Արջուտ բնակավայրերից:


Երկուշաբթի և հինգշաբթի օրերին՝ Վահագնի, Անտառամուտ, Ձորագետ, Փամբակ բնակավայրերից:

Երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ Դեբեդ, Եղեգնուտ, Ձորագյուղ, Վահագնածոր բնակավայրերից:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սանիտարական մաքրման սխեմայի

Փամբակ համայնքի սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասագործման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

Փամբակ համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, կամուրջների, հասարակական վայրերի, պուրակների, պատմամշակութային հուշակոթողների, համայնքի տարածքով անցնող մայրուղու և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից, ձյունից:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

Ամառային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանք:

Ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքների մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

Աղբը հավաքվում է պարկերում և տեղափոխվում բեռնատարով:

Ձմեռային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների մաքրումը ձյունից, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների, մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալը տարվա ընթացքում կազմում է՝ 15 տոննա:

Փամբակ համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները.

Փամբակ համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող ինքնաթափ բեռնատար մեքենայով:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



Կիրառվող մեթոդներ

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի 1խմ աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության

N	Աղբառաջացման օբյեկտ /անձ/ կամ գործունեության տեսակ	Առաջացած աղբի նորմատիվները տարի/խմ
1	Մթերային խանութներ	
ա	- 5-10 քմ առևտրային մակերես /25 խանութ/	68 խ.մ.
1	Առողջապահական կենտրոններ	
ա	- 128 քմ առողջապահական մակերես /3 ԱԱԴԿ/	9 խ.մ.
1	Կապ	
ա	- 570 քմ մակերես /10 Հայփոստ ՓԲԸ/	7 խ.մ.
1	Դեղատուն	
ա	- 38 քմ մակերես /1 դեղատուն/	4 խ.մ.
	Հանրային սննդի օբյեկտներ	
ա	-20-60 քմ-ից ավելի մակերես /1ռեստորան/	72 խ.մ.
2	Հյուրատուն	
ա	- 20 քմ մակերես /4 հյուրատուն/	2 խ.մ
3	Հանրակրթական դպրոցներ	
ա	- 1500 քմ համար/13 դպրոց/	80 խ.մ
4	Կաթի վերամշակման և պահածոների գործարաններ	
ա	- 1060 ք.մ արտադրական մակերես (5 արտադրություն)	67 խ.մ
	ՀԷԿ	
	-121 ք.մ մակերես/3 հէկ/	5 խ.մ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման

1. Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը համայնքի Փամբակ համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

3. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:

4. Փամբակ համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:

Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե Փամբակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից վերապահվել է համայնքի աշխատակազմին:

Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափերին համապատասխան՝

Կենցաղային աղբի համար՝


ըստ բնակության հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի.

Ոչ կենցաղային և խոշոր եգրաչափի աղբի համար՝

ըստ 4 հավելվածով սահմանված աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Փամբակ համայնքի ղեկավարը:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔ



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 032-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.06.2022թ-ի թիվ 78-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ
ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի
1-ին մասի 30.1-րդ և 33-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման
մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, «Նորմատիվ իրավական
ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում
աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի
հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 14.06.2022թ-ի
«Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի
հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» թիվ
78-Ա որոշումը:

Կողմ -11
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԺԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



Կ Ա Ր Գ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Փամբակի ամայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարման գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Փամբակ համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցները և (կամ) Փամբակ համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները):

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է .

7.1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ 100 մեկ հարյուր ՀՀ դրամ:

7.2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով ամսեկան՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 յոթանասուն ՀՀ դրամ.

բ. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 30 երեսուն ՀՀ դրամ.

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 20 քսան ՀՀ դրամ.

դ. գիտական, կրթականնուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 հինգ ՀՀ դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 ութ ՀՀ դրամ.

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 10 տաս ՀՀ դրամ.

զ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն ենթակետի 1-5-րդ պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2) կետի ա-ե ենթակետերով սահմանված դրույքաչափով.

7.3) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 50 հիսուն ՀՀ դրամ:

7.4) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7)-րդ մասի 7.2) կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

• ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

• ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

• ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վճարի վերահաշվարկը կատարվում է ճշգրտված տեղեկությունների ներկայացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

IV. Աղբահանության վճարի հաշվարկը և վճարումը

8. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների՝ օպերատորի կողմից, աղբահանության համապատասխան համակարգչային ծրագրով:

9. Վճարողը օպերատորից տեղեկանալով աղբահանության վճարի չափի մասին բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցում է համապատասխան բանկային հաշվին:

10. Փամբակ համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները) Փամբակի համայնքապետարանին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ (հաշվետվություն) հաշվետու ժամանակաշրջանում աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև համապատասխան բանկային հաշվին մուտքագրված աղբահանության վճարների արդյունքների վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

11. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

12. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

13. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի համապատասխան բանկային հաշվին մուտքագրման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 033-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:
- 2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:
- 3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:
- 4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:
- 5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:

6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐԵԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ Լ Ո Ռ ՈՒ Մ Ա Ր Զ Ի

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ


Հաստատված է Փամբակ համայնքի

(քաղաքային, գյուղական համայնքի անվանումը)

ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի N 033-Ն որոշմամբ

(ամիս, ամսաթիվ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

(Անուն, ազգանուն, հայրանուն)

Հատված 1
Համայնքի բյուջեի եկամուտները

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող		766907.90	766907.900	116325.571
1100	այդ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող	7100	115980.80	115980.8	X
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող	7131	40951.40	40951.4	X
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների		0.00	0.0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		0.00	0.0	X
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		40951.40	40951.4	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	67389.80	67389.8	X
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		67389.8	67389.8	X
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող	7145	7639.6	7639.6	X
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		2982.6	2982.6	X
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,		0.00		X
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների		0.0	0.0	X
11304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար		1400.0	1400.0	X
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		30.0	30.0	X
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում		0.00		X
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի		2200.0	2200.0	X
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում		0.00		X
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		200.0	200.0	X
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		430.0	430.0	X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային		0.00		X
11312	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների (բացառությամբ Երևան քաղաքի)		77.00	77.00	X
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և		300.00	300.00	X
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.00		X
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության		0.00		X
11316	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման		0.00		X
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն		0.00	0.00	X
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		20.00	20.00	X
11319	Այլ տեղական տուրքեր		0.00		X
6				ԵԿԵՂԵՑԻ	18-19-րդ դդ.	գյուղի հս եզրին, գործող գերեզմանոցի մուտքի մոտ	<	
	6.1			Գերեզմանոց	14-20-րդ դդ.		<	
	6.2			խաչքար	14-15-րդ դդ.	եկեղեցու խորանում	<	
	6.3			խաչքար	18 դ.	եկեղեցու խորանում	<	
7				ՀՈՒՇԱՂՔՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1968 թ.	գյուղի կենտրոնում	S	
8				ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԿԻՐԱԿԻ («ԶՈՐԱՎՈՐ ԾԱՌ»)	18-19-րդ դդ. 13 դ.	գյուղից 300 մ հվ, «Չայիրներ» հանդամասի աե եզրին, ջրամբարի մոտ	<	պահպանվել են պատերի հիմնամասերը
	8.1			խաչքար	12-13-րդ դդ.		<	պատվանդանի վրա, երեք խաչքարերից ձախակողմյանը
	8.2			խաչքար	12-13-րդ դդ.		<	պատվանդանի վրա, երեք խաչքարերից կենտրոնինը
	8.3			խաչքար	12-13-րդ դդ.		<	պատվանդանի վրա, երեք խաչքարերից աջակողմյանը

5.23. Բազում գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՅ «ԲԵՐԴԱՏԵՂ»	Ք. ա. 2 հազ.	գյուղի աե եզրին, Բազումթառ գետակի ձախ վտակի ձախ ափին	<	բլրի վրա
2				ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	եկեղեցու մոտ, Գյոգալդարա տանող ճամփի աջ կողմում	<	հողի կտրվածքում դիտվում են խեցեղենի բեկորներ, մոխրաշերտ

	10.2			Մատուռ	միջնադար		<	պահպանվել են հիմքերը
11				ԵԿԵՂԵՑԻ	19 դ.	գյուղի մեջ	<	կիսավեր
	11.1			Գերեզմանոց	19 դ.	Եկեղեցու շրջակայքում	S	
	11.2			Խաչքար	15 դ.		S	
	11.3			Խաչքար	15-16-րդ դդ.		S	
	11.4			Խաչքար	16 դ.		S	
12				ԽԱՉՔԱՐ	12-13-րդ դդ.	գյուղից 1 կմ հվ, ճանապարհի եզրին	<	
13				ԿԱՄՈՒՐՋ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ	19 դ.	Փամբակ գետի վրա	S	քառաթիչք
14				ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1941-45 թթ.	գյուղի սկզբնամասում, ճանապարհի ձախ կողմում	S	
15				ՄԱՏՈՒՌ ՍՔ. ԿԻՐԱԿԻ	18-19-րդ դդ.	գյուղից 2 կմ հվ-ան, ճանապարհի աջ եզրին	S	վերակառուցվում է
	15.1			Գերեզմանոց	12-19-րդ դդ.		<	
		15.1.1		Խաչքար	12-13-րդ դդ.		<	պահպանվել է չորս բեկոր
		15.1.2		Խաչքար	15 դ.		S	պահպանվել է երեք բեկոր
		15.1.3		Խաչքար	15-16-րդ դդ.		S	եռատված
		15.1.4		Խաչքար	15-16-րդ դդ.		S	պահպանվել է երկու բեկոր
	15.2			Խաչքար	13-14-րդ դդ.	մատուռի մեջ	<	կանգնեցված է տուֆե սրբատաշ պատվանդանի վրա

5.41 Լեռնապատ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՅ	Ք. ա. 4-3 հազ.	գյուղից 1 կմ հվ, Լեռնաջուր գետի աջ ափին	<	ավերված
2				ԱՄՐՈՅ	Ք. ա. 3 հազ.	գյուղից 0.5 կմ ամ, Լեռնաջուր գետի ձախ կողմում	<	բլրի վրա, ավերված
	2.1			Մատուռ Սք. Գաբրիել, «Գաբրիել-Մուքել»	վաղ միջնադար		S	բլրի գագաթին, ավերված
3				ԱՄՐՈՅ «ԲԵՐԴԱՂ»	Ք. ա. 2-1 հազ.	գյուղի ան կողմի	<	բլրի գագաթին, ավերված
	3.1			Դամբարանադաշտ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ ան, «Եվքլու» հանդամա-սում, «Բերդաղ» ամրոցից ան	<	ավերված
4				ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	12-20-րդ դդ.	գյուղի հվ-ան մասում, Լեռնաջուր գետի աջակողմյան վտակի ափին	<	գյուղի գործող գերեզմանոցն է
	4.1			Եկեղեցի	17-18-րդ դդ.	գերեզմանոցում	<	ավերված
5				ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	18-19-րդ դդ.	գյուղի հս-ան մասում	S	
	5.1			Մատուռ Սք. Կիրակի	19 դ.	Լեռնաջրի աջ ափին,	S	բլրի գագաթին
6				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԲԱԳԵՐ»	16-18-րդ դդ.	գյուղից 1.5 կմ հվ-ամ	<	ավերված
	6.1			Եկեղեցի	16-18-րդ դդ.		<	
7				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՈՒՌՈՒՏ»	5-15-րդ դդ.	գյուղից 1 կմ հվ, ճանապարհի աջ կողմում	<	
	7.1			Դամբարանադաշտ	Ք.ա. 4-3 հազ.	Ուռուտ հանդամասում, գետի մոտ	<	գուրկ է վերգետնյա նշաններից
	7.2			Գերեզմանոց	10-19-րդ դդ.		<	ավերված
		7.2.1		Խաչքար	10-11-րդ դդ.	Եկեղեցուց ան	<	հատված
		7.2.2		Խաչքար	11 դ.	Եկեղեցուց հվ-ան	<	պատվանդանի վրա

		7.2.3	Խաչքար	12 դ.	Եկեղեցուց աե	<	հատված
		7.2.4	Խաչքար	12-13-րդ դդ.	Եկեղեցուց աե	<	հատված
		7.2.5	Խաչքար	12-13-րդ դդ.	Եկեղեցու հս-աե անկյան մոտ	<	ընկած է գետնին
		7.2.6	Տապանաքար	16-17-րդ դդ.	Եկեղեցուց հվ-ամ	S	խիստ հողմահարված արձանագրությամբ, կիսով չափ թաղված հողի մեջ
	7.3		Եկեղեցի	5-7-րդ դդ.		<	ավերված, եկեղեցու մեջ և շուրջը կան արձանագիր որմնաքարեր
		7.3.1	Խաչքար	12-13-րդ դդ.	Եկեղեցու խորանում	<	
		7.3.2	Խաչքար	12-13-րդ դդ.	Եկեղեցու մեջ	<	
8			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՔԻԼԻՍԱ»	միջնադար	գյուղից 8 կմ հս	<	
	8.1		Եկեղեցի	5-7-րդ դդ.	գյուղատեղիի հվ-աե մասում, Լեռնաջուր գետի աջակողմյան վտակի աջ ափին	<	ավերված
	8.2		Խաչքար	12-13-րդ դդ.	Քիլիսա և Գյուլյուդարա լքված գյուղերի դպրոցի շենքի բակում, ճանապարհի մոտ	<	տեղափոխվել է եկեղեցուց
9			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից աե	<	
10			ԴՈԼՄԵՆՆԵՐ		գյուղի մոտ	<	
11			ԵԿԵՂԵՑԻ	6-7-րդ դդ.	գյուղից 1 կմ հս	<	ավերված, հողով ծածկված
	11.1		Գերեզմանոց	միջնադար	Եկեղեցուց մոտ 200 մ հվ-աե, Լեռնաջուր գետի աջ ափին	<	
12			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1976 թ.	գյուղի հս-աե կողմում, բլրի վրա	S	
14			ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՆՇԱՆ	17-18-րդ դդ.	գյուղի հս-աե կողմում, բլրի վրա	S	վերակառուցվել է վերջերս
15			ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	19 դ.	գյուղի հվ-աե կողմում, զոհվածների հուշարձանի մոտ	S	
	15.1		Հուշակոթող Մեծ եղեռնի զոհերին	1977 թ.	բլրի վրա	<	Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում
16			ՍՐԲԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 7 կմ հվ, «Քիլիսա» գյուղատեղի տանող ճանապարհի ծախ կողմում	S	ժայռի վրա պատկերված են պարզ խաչեր

5.59.2 Ծաղկոց /Հայդարլի/ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ		գյուղից հվ-աե	<	

5.65. Ձորագետ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղի հս կողմում, «Բերդ» վայրում	<	սարի գագաթին
2				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	միջնադար	գյուղի հս-ամ կողմում, «Ճլկուտ» վայրում	<	
3				ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղում և նրա շրջակայքում	<	
4				ԴՈԼՄԵՆՆԵՐ	Ք. ա. 3-2 հազ.	գյուղի շրջակայքում, «Լոբատեղի չայիրներ» և «Խաչերի տափ» վայրում	<	
5				ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ-ՄԱՆՈՒԿ	18-19-րդ դդ.	Վահագնի տանող ճանապարհի ծախ կողմում	<	
	5.1			Գերեզմանոց	միջնադար		<	
6				ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԿԻՐԱԿԻ	միջնադար	գյուղի հվ կողմում	<	
	6.1			Գերեզմանոց	միջնադար		<	

5.66. Ձորագյուղ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ «ՔԻՐ ՈՒ ԱԽՊԵՐ»	10-13-րդ դդ.	գյուղից հս, Ձորագետի էլեկտրակայանի մոտ, Ձորագետի աջ և ձախ ափերին	<	երկու ժայռերի կատարների վրա, ավերված
2				ԲԵՐԴՇԵՆ	Ք. ա. 4-3 հազ.	գյուղից 1,5 կմ հվ	<	
3				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-14-րդ դդ.	Ձորագետի ամ կողմում, Ստեփանավան տանող խճուղու եզրին	<	սարահարթի վրա
4				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԲԱԽԱՏՄԱՏ»	միջնադար	գյուղի աե կողմում	<	ավերված
5				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԿԱՏԱՐ»	միջնադար	գյուղի հվ կողմում	<	
6				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՆԵՐՔԻՆ ՇԲՈՉ»	միջնադար	Վահագնի տանող ճանապարհի աջ կողմում, Վ. Շքոչից քիչ հեռու	<	
7				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՎԵՐԻՆ ՇԲՈՉ»	միջնադար	Վահագնի տանող ճանապարհի աջ կողմում	<	
8				ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 700 մ ամ, «Խասիկներ» հանդամասում	<	
9				ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	գյուղի մեջ	<	խորհրդային կարգերի օրոք դարձվել էր պահեստ
	9.1			Գերեզմանոց	16-17-րդ դդ.	Եկեղեցու շուրջ	S	
10				ԵԿԵՂԵՑԻ	1906 թ.	գյուղի հվ-ամ մասում	<	
11				ՀՈՒՇԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1976 թ.	գյուղի մեջ	S	

5.70. Մարգահովիտ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք. ա. 4-3 հազ.	գյուղի հս եզրին, ճանապարհի ձախ կողմում	<	զառիթափ լանջին
2				ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՍԱՐԻ ՍՈՓ»	Ք. ա. 3-1 հազ.	գյուղի ամ եզրին	<	ոչ բարձր բլրի վրա
3				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20-րդ դդ.	Եկեղեցուց 70 մ ամ	S	
4				ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ	1872 թ.	գյուղի հվ մասում, բլրակի վրա	<	հվ-աե ավանդատան մուտքից վեր ագուցված է վաղ միջնադարյան հավասարաթև խաչապատկերով քար
	4.1			Գերեզմանոց	17-20-րդ դդ.	Եկեղեցու շրջակայքում	S	
		4.1.1		Եկեղեցի	վաղ միջնադար	գերեզմանոցի հվ մասում	S	ավերված
		4.1.2		Խաչքար	17-18-րդ դդ.		S	ընկած է գետնին
		4.1.3		Տապանաքար	16-17-րդ դդ.	գերեզմանոցի հվ եզրին, ճանապարհի մոտ	<	ուղղանկյուն, քանդակազարդ
		4.1.4		Տապանաքար	18-19-րդ դդ.		S	հարթ, մարդու գծապատկերով
	4.2			Զանգակատուն	19 դ.	Եկեղեցուն կից	S	
	4.3			Խաչքար	15-16-րդ դդ.	Եկեղեցու մուտքի աջ անկյունում	S	
	4.4			Խաչքար	15-16-րդ դդ.	Եկեղեցու աե պատի վրա	S	
5				ԽԱԶՔԱՐ	17 դ.	գյուղի ամ եզրին, «Սարի սոփ» կոչվող բլրի վրա	<	երկատված, ընկած է գետնին
6				ՀՈՒՇԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1970-ական թթ.	գյուղի աե եզրին, Վանաձոր - Դիլիջան մայրուղուց ձախ	S	լեռնալանջին

7				ՀՈՒՇԱՂՔՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՁՈՀՎԱԾՆԵՐԻՆ		գյուղի խնայողամարկղի մոտ	S	
8				ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ		հիվանդանոցի մոտ	S	

5.102 Վահագնաձոր գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ «ՍԻՍԻ ԲԵՐԴ»	ուշ միջնադար	Լոռի հանգստյան տնից 7 կմ հվ-աե, բարձր քառաժայռի կատարին	<	
	1.1			Խաչքար			<	

5.103. Վահագնի գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	Հագնի հանդամասից 700 մ հս	<	Քյոր-Օղլու յալ վայրում
2				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-19-րդ դդ.	գյուղի հս եզրին	<	Օհանյանների թաղում
	2.1			Խաչքար	13-14-րդ դդ.		<	ստորին հատվածը
	2.2			Խաչքար	14-15-րդ դդ.		<	ստորին մասը
3				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ «ՎԱՐԴՈՒՄՅԱՆՆԵՐԻ»	15-19-րդ դդ.	գյուղի կենտր. մասում	<	ավերված
	3.2			Խաչքար	15-րդ դդ.		<	հենած է քարե ցանկապատին
4				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	Զամառլուի ձորում	<	ավերված
5				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	13-19-րդ դդ.	գյուղից 4 կմ հս-ամ, «Կալատեղեր» վայրում	<	ավերված
6				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԿԱՏԱՏ»	12-19-րդ դդ.	Ձորագյուղ տանող ճանապարհին	<	ավերված
	6.1			Գերեզմանոց	12-19-րդ դդ.	գյուղատեղիից հվ	<	
		6.1.1		Մատուռ	միջնադար	Անտառամուտ գետակի աջ ափին	<	
			6.1.1.1	Խաչքար	15-16-րդ դդ.		<	
7				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՀԱԳՆԻ»		գյուղից Կուրթան տանող ճանապարհի եզրին	<	ավերված
	7.1			Եկեղեցի	12-13-րդ դդ.	«Հագնու հողեր» վայրում	<	
		7.1		Գերեզմանոց	12-17-րդ դդ.		<	
8				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՎԻՐՈՒ ՀԱԳՆԻ»	միջնադար	գյուղից ամ	<	ավերված
	8.1			Գերեզմանոց		գյուղատեղում	<	ավերված
9				ԵԿԵՂԵՑԻ	5 6-րդ դդ.	գյուղից 3 կմ հս-ամ, Վահագնի-Անտառամուտ ճանապարհից 200 մ աջ	<	վարելահողերում, ավերված
	9.1			Գերեզմանոց	12-13-րդ դդ.	Եկեղեցու շուրջ	<	կիսավեր
10				ԵԿԵՂԵՑԻ	12-13-րդ դդ.	գյուղից 2 կմ հս-ամ, «Վերու Հագնի» վայրի «Ղամշկուտ» հանդամասում, Անտառամուտ գետակի ձախ ափին	<	
	10.1			Գերեզմանոց	12-13-րդ դդ.	Եկեղեցու հվ կողմում	<	ավերված
		10.1.1		Խաչքար	12-13-րդ դդ.		<	
		10.1.2		Խաչքար	13 դ.		<	պահպանվել է պատվանդանը

	5.3			Խաչքար	15 դ.		S	պարզ հորինվածքով
6				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԲՆՁՈՐ»	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 3 կմ հվ-աե, Բնձոր վտակի աջ և ձախ ափին, Փամբակ կայարանի դիմաց		անտառում, գտածոները պահվում են Լոռու երկրագիտական թանգարանում
	6.1			Գերեզմանոց «Մոշուտ տախտ»	միջնադար	«Ավյազի տափ» վայրում	<	
7				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԽԱՉԻ ԹՈՒՄԲ» («ԽԱՉԻ ԹԱԼԱ»)		գյուղից 0.5 կմ հվ-աե, Փամբակ գետի աջ ափին, ճանապարհի մոտ	<	
	7.1			Գերեզմանոց «Խաչի թումբ»	12-15-րդ դդ.		<	ավերված, տարածքում պահպանվել են դամբարանադաշտի մնացորդներ
		7.1.1		Խաչքար	12-13-րդ դդ.		<	վերին կեսը
		7.1.2		Խաչքար	13-14-րդ դդ.		<	երկատված, մասերը դրված են կողք կողքի
		7.1.3		Խաչքար	15 դ.		<	պարզ հորինվածքով
	7.2			Խաչքար	13 դ.		<	վերնամաս
	7.3			Խաչքար	13 դ.	գետակի ձախ ափին	<	տեղահանված
8				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.		<	
9				ԽԱՉՔԱՐ	12-13-րդ դդ.	գյուղից 1 կմ հս, «Խաչի յալ» բլրի վրա	<	ուխտավայրում

5.108 Քարաբերդ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղի հս-ամ եզրին, գերեզմանոցի տարածքում	<	ավերվում է ժամանակակից թաղումների և բնակելի տների կառուցման պատճառով
2				ԵԿԵՂԵՑԻ	19 դ.	գյուղի հս-ամ եզրին	<	կիսագետնափոր
	2.1			Գերեզմանոց	19-20-րդ դդ.	եկեղեցու շուրջը	<	լեռնալանջին
		2.1.1		Խաչքար	12-13-րդ դդ.	եկեղեցու մոտ	<	մի քարի հենած
3				ԽԱՉՔԱՐ	9-10-րդ դդ.	գյուղից հս եզրին	<	բլրի վրա

		10.1.3	Խաչքար	14-15-րդ դդ.		<	պահպանվել է պատվանդանը
		10.1.4	Տապանաքար	16-17-րդ դդ.		S	մարդու հարթաքանդակով
		10.1.5	Տապանաքար	16-17-րդ դդ.		S	մարդու հարթաքանդակով
11			ԵԿԵՂԵՑԻ	19 դ.	գյուղի կենտրոնում, ակումբի մոտ	<	
	11.1		Գերեզմանոց	18-19-րդ դդ.	եկեղեցու շրջակայքում	<	
		11.1.1	Խաչքար	15-17-րդ դդ.		<	
		11.1.2	Տապանաքար	19 դ.		S	
	11.2		Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն հվ-ամ-ից	<	
	11.3		Խաչքար	10-11-րդ դդ.	ագուցված է բեմի ճակատին	<	
	11.4		Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մկրտարանին խորշի պատին	<	վերնամաս
	11.5		Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է եկեղեցու հվ պատին, մուտքից վեր	<	
	11.6		Խաչքար	17-18-րդ դդ.	ագուցված է եկեղեցու մուտքից վերև	S	
12			ԽԱԶՔԱՐ	12-13-րդ դդ.	գյուղի հվ-ամ, Վանաձոր-Ալավերդի ճանապարհի մոտ	<	բլրալանջի քարերի մեջ, վերին կեսը
13			ԽԱԶՔԱՐ	13 դ.	գյուղից 1 կմ հս, Վահագնի-Անտառամուտ ճանապարհից ձախ	<	
14			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	գյուղի կենտրոնում, բարձունքի վրա	S	
15			ՄԱՏՈՒԹ	5-7-րդ դդ.	գյուղից 2 կմ հս, «Ներքին Հագնի» վայրում	<	ավերված
	15.1		Խաչքար	9-10-րդ դդ.	մատուռի հվ պատի մոտ	<	երկատված
	15.2		Խաչքար	9-10-րդ դդ.	նախորդի մոտ	<	
	15.3		Խաչքար	12-13-րդ դդ.	նախորդի մոտ	<	
	15.4		Խաչքար	13-14-րդ դդ.	նախորդի մոտ	<	

5.107. Փամբակ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ «ՂԱՅԼՈՒՄ»		գյուղից 5 կմ ամ	<	
2				ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք. ա. 3-2 հազ.	գյուղից 1 կմ աե, մայրուղուց Քարաբերդ տանող ճանապարհի ձախ և աջ եզրին	<	բացվել է ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ
3				ԲՆԱԿԱՏԵՂԻ «ԳՅՈՒՆԵՐԻ ԹՈՒՄԲ»	Ք. ա. 2 հազ.	գյուղից 0.5 կմ հս-ամ	<	
	3.1			Դամբարանադաշտ	Ք. ա. 1 հազ.		<	
4				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-18-րդ դդ.	գյուղի հս-աե կողմում, Թընթողլի վայրում	<	անտառի մեջ
	4.1			Մատուռ	12-13-րդ դդ.		<	
5				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ «ՄԱՄԽՈՒՏ ԹՈՒՄԲ»	12-15-րդ դդ.	գյուղից 2 կմ հվ-աե, Փամբակ գետի աջ ափին	<	անտառապատ վայրում, ավերված
	5.1			Խաչքար	12-13-րդ դդ.		<	տեղահանված, ստորին և վերին եզրերը կոտրված
	5.2			Խաչքար	12-13-րդ դդ.		<	խաչքարի ստորին հատվածի 4 բեկոր

Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Պահպանման ենթակա են 3.1 կետում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը և շինությունները.

1. Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբարները, ջրամատակարարման ցանցը,
 2. Կոյուղաջրերի մաքրման կայանները՝ կոյուղու կոլեկտորների հետ միասին, ջրահեռացման ցանցը՝ դիտահորերի հետ միասին,
 3. Համայնքի տարածքով անցնող ոռոգման հիմնական ջրանցքները, ոռոգման առուների ցանցը,
 4. Էլեկտրահաղորդման ցանցի օբյեկտները՝ ենթակայաններ, հենասյուներ, հաղորդագծեր ևն,
 5. Գազամատակարարման ցանցի օբյեկտները՝ բաշխիչ կայաններ, խողովակաշարեր ևն,
 6. Հեռահաղորդակցման և կապի ցանցի օբյեկտները՝ վերգետնյա և ստորգետնյա մալուխներ, բջջային կապի կայաններ, աշտարակներ ևն,
 7. Երկաթուղագծերը՝ անվտանգության գոտիով և տարահատման կամրջով,
 8. Մայրուղողիների և ճանապարհների հետիոտնային անցումները՝ ստորգետնյա և կամրջային:
 9. Հանրային այգիները,
 10. Արվեստի դպրոցները,
 11. Մարզադպրոցները,
 12. Մանկապարտեզները:
 13. Համայնքի փողոցների ցանցը՝ ճանապարհային նշանների և սարքավորումների հետ միասին,
 14. Գերեզմանոցները՝ սանիտարապաշտպանիչ գոտու հետ միասին,
 15. ՀՀ ՊՆ, ՆԳ, ԱԻՆ օբյեկտները, պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության կառույցները, ապաստարարանները, ազդանշանման համակարգերը ևն,
- 4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական, այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով և մասնագիտական բարձր վարպետությամբ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

բ. հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը, բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն իրականացնել, հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը,

դ. խրախուսվում են շենքի ճակատների և փողոցի հարակից մասերի մաքրությունը, ամրությունը, արտաքին լուսավորությունը:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները). խրախուսվում են բարձրորակ, հարատև, էկոլոգիապես մաքուր ու անվնաս շին. նյութերը:

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով, նստարաններով և լուսավորության ցանցով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

գ. հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. հասարակական, ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր) հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ,

բ. հետևողականորեն իրականացնել, ամբողջ համայնքի հատվածում, հանքերի փոշու և քամու դեմ պաշտպանական գոտու, ինչպես նաև գերեզմանոցների շուրջ սանիտարական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, որը

ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշեր, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո, նախագիծը համայնքի ղեկավարի կողմից: Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Ավարտված շինարարության փաստագրումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

Արգելվում է առանց համայնքի ղեկավարի որոշման և թույլտվության շենքերի պատշգամբների, ինչպես նաև վարձակալած ոչ բնակելի տարածքներում որևէ վերափոխումներ կատարել, շենքի արտաքին տեսքը փոփոխել:

Արգելվում է շենքերի բակերում որևէ տաղավար կամ ավտոտնակ տեղադրելիս կամ կառուցելիս ցանկապատումները, ծանր տրանսպորտային միջոցների կանգառումը:

Արգելվում է գազոններին կամ մայրերին կից հողատարածքները բանջարանոցի վերածել, նախամուտքերը և սանդուղքավանդակները տնտեսական իրերով ծանրաբեռնել, չնախատեսված տեղերում ընտանի կենդանիներ պահել:

2. ԳՈՎԱԶԴԴՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Բոլոր տեսակի արտաքին գովազդային նյութերի, ցուցափեղկերի, հայտարարությունների, ցուցատախտակների և այլ տեղեկատվական միջոցների տեղադրումը շենքերի, պարիսպների առանձին վահանակների, ստենդների և նման ճարտարապետական կառույցների վրա թույլատրվում է միայն համայնքի ղեկավարի որոշմամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Գովազդները պետք է լինեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հավաստի, օրինական, պատշաճ պահպանելով արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության բոլոր պայմանները:

Գովազդի տեղաբաշխման նկատմամբ հսկողությունը իրականացնում է համայնքապետարանը: Արգելվում է անբարեխիղճ, ոչ ՀՀ օրենքներին համապատասխանող գովազդի տեղադրումը, էլեկտրաէներգիայի բաշխման, արտաքին լուսավորության և հեռահաղորդակցության սյուների, հանրային լուսավորության կայանքների, գազամատակարարման, ջրահեռացման,

տրանսպորտի, ինչպես նաև ճանապարհային, երկաթուղային, ջրային կամ օդային երթևեկության հետ կապված տարրերի, հանրային սարքավորումների կամ գույքի վրա:

Ժամանակավոր տաղավարների տեղադրումը թույլատրվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի, համայնքի ղեկավարի որոշմամբ, հող.օգտագործման և շինարարության բաժնի մասնագետի ներկայությամբ՝ համաձայն առևտրի և սպասարկման համայնքային կանոնների:

Վերը նշված գործողությունների համար գանձվում են համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարներ:

Համայնքի ղեկավարը սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը: Համայնքի ավագանու որոշմամբ անվանվում և վերանվանվում են համայնքային նշանակության փողոցները, հրապարակները, զբոսայգիները և այլն:

Արգելվում է ինքնուրույն կերպով հանել, տեղադրել և վերատեղադրել փողոցների անվանումների և համարակալման ցուցանակները:

VII. ԿԱՌՈՒՑԱԴԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա առանց էական շեղումների:

Ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանները:

Շինարարական աշխատանքներ կատարելիս շինհրապարակները պետք է ցանկապատվեն՝ ժամանակավորապես և տեսանելի տեղում փակցվեն համապատասխան ցուցանակներ ունենալով համապատասխան կահավորում: Շինարարական աղբն ու հողը պետք է դուրս բերվեն կուտակվելու ընթացքում: Շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ձեռնարկում է միջոցառումներ, որպեսզի չկեղտոտվեն շինհրապարակին հարող տարածքները, չաղտոտվի օդը:

Հողային աշխատանքների կատարումը (հրապարակներում, մայթերում, անցումներում, բակերում, սիզամարգերում, այգիներում, պուրակներում և այլ տեղերում) ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման և վերանորոգման ժամանակ, կապված վերգետնյա կառույցների հետ, թույլատրվում է միայն ըստ համաձայնեցված նախագծերի և համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա:

Ճանապարհաճանկույթի կամ հողաճանկի քանդման հետ կապված վթարային աշխատանքները թույլատրվում են ընդունված վթարային հեռախոսագրի առկայությամբ այն կազմակերպությունների կողմից, որոնք տնօրինում են հաշվեկշռում գտնվող ինժեներական ցանցերը:

Ստորգետնյա ինժեներական ցանցերի վթարների վերացումը սկսվում է անմիջապես հեռախոսագրի հաղորդումից հետո, այդ մասին տեղյակ պահելով ավտովերահսկողությանը և կոմունալ սպասարկման ձեռնարկությանը:

Վթարային աշխատանքների տեղը պետք է շրջափակվի, կահավորվի ճանապարհային նշաններով և լուսավորվի մութն ընկնելիս: Վթարը վերացնող կազմակերպությունը պարտավոր է նաև անհապաղ (նախնական) վերականգնի քանդված հատվածը հողով՝ շերտային

խտացումով և համապատասխան չափի խճանյութով, ինչպես նաև մաքրի ավելորդ հողից և շինարարական մնացորդներից, գոյացած աղբից:

Վթարից վերականգնված հատվածները հանձնվում են կոմունալ սպասարկման ձեռնարկությանը կամ ճանապարհային հսկողություն իրականացնող ծառայությունների ներկայացուցիչներին ակտով, ճանապարհի ծածկույթը ամբողջովին վերականգնելուց հետո:

Կտրականապես արգելվում է ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման կամ պլանային վերանորոգման աշխատանքների կատարումը վթարային աշխատանքների պատրվակով:

Արգելվում է ինքնակամ պեղումների, հորատման, պլանների ու ձողերի տեղադրման, հողաձածկույթի մշակման, հրապարակների հողահավասարեցման, փլատակների և քանդման ենթակա

կառույցների տակի հողաձածկույթների մշակումը առանց ստորգետնյա ինժեներական ցանցերի (էլեկտրականություն, գազ, ջուր և այլն) անջատման:

Մագիստրալային փողոցների հատման հիմնական մեթոդը հանդիսանում է, որպես կանոն, փակ՝ ստորգետնյա ձևը, որը լուծվում է նախագծային կազմակերպությունների կողմից, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում և համաձայնեցվում ընդունված կարգով:

Արգելվում է որևէ տեսակի հողային աշխատանքների կատարումը նոր ճանապարհաձածկույթի (ասֆալտի) կատարումից հետո փողոցներում, հրապարակներում:

Բացառություններ թույլատրվում են միայն վթարների դեպքում:

Շինարարական, վերանորոգման աշխատանքների ժամանակ ցանկապատման, երթևեկության կարգավորման, ճանապարհային նշաններով կահավորման և գիշերային լուսավորման պատասխանատվությունը կրում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտը: Շինարարական կազմակերպությունը պարտավոր է մագիստրալային և հասարակական տրանսպորտի երթևեկության, փողոցների շարժման ուղղությունների փոփոխության մասին պետավտոտեսչության միջոցով ապահովել բնակիչների անվտանգությունը: Աշխատանքների ավարտից հետո ժամանակավոր կարգավորման նշանները վերացվել են:

Փողոցների երթևեկելի մասի մասնակի վերանորոգումների ժամանակ պետք է ապահովվի տրանսպորտի անխափան երթևեկությունը, իսկ միջանցիկ անցման փակելիս ապահովվի հրդեհային պաշտպանության, շտապ օգնության, հատուկ սանիտարական մաքրման, էլեկտրական և գազի ծառայության մեքենաների երթևեկության պայմանները: Անցումների փակման վերաբերյալ տեղյակ է պահվում շտապ օգնության, հակահրդեհային ծառայություններին և պետավտոտեսչությանը:

Ժամանակավոր շրջանցումային ճանապարհները, հետիոտնային արահետները, կամուրջները, բակերի և շենքերի մուտքերի մերձեցման ուղիների վերանորոգման աշխատանքները ավարտելիս վերացվում են կառուցապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների կողմից:

Ճանապարհների լրիվ փակման և երթևեկության դադարեցման որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով պետավտոտեսչության հետ:

Երթևեկելի մասի և մայրերի շինարարության վերանորոգման աշխատանքների ժամանակ ստորգետնյա ցանցերի տնօրինողները պարտավոր են իրենց ուժերով, վերանորոգում կատարողների պահանջով, կատարել վերատեղադրող ցանցերի անջատումը: Բարեկարգման նպատակով ստորգետնյա ինժեներական ցանցերի նոր նշումների վերատեղադրումը կատարում են ցանցերը

տնօրինողների կողմից, շինարարության կամ վերանորոգումը իրականացնող պատվիրատուի կազմակերպության պատվերով ու նրա միջոցներով: Նախագծից էական շեղումներ ունեցող ինժեներական ցանցերի տնօրինողները վերատեղադրման աշխատանքները կատարում են իրենք, սեփական միջոցներով:

Քաղաքացիների կողմից ինժեներական կառուցումների միացումը, որպես կանոն իրականացվում է բարեկարգման աշխատանքների ժամանակ:

Թրթուրավոր տրակտորների շարժումը վերանորոգված փողոցներով արգելվում է: Նման տրանսպորտի տեղափոխությունը համայնքի տարածքում կազմակերպվում է միջդաշտային ճանապարհներով և երկրորդային նշանակության փողոցներով:

Փողոցները, մայրերը, ասֆալտապատված և բարեկարգված այլ տարածությունները ինքնակամ քանդողները անհապաղ դադարեցնում են քանդման աշխատանքները, իրենց միջոցներով վերականգնում քանդված տարածքի նախկին տեսքը և օրենքով սահմանված կարգով կրում պատասխանատվություն:

VIII. ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆժԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ստորգետնյա ինժեներական ցանցերի հետ առնչվող բոլոր տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միայն այն նախագծով և սխեմաներով (տեխնիկական պայման), որոնք համաձայնեցված են համայնքապետարանի և ներքոհիշյալ կազմակերպությունների հետ:

- Քաղաքային էլեկտրացանց
- Կապի ձեռնարկություն
- Գազի շահագործման միջշրջանային վարչություն
- Կոմունալ սպասարկման ձեռնարկություն
- Զրմուղ-կոյուղու ձեռնարկություն

Առանձին դեպքերում, երբ ինժեներական ստորգետնյա կառույցները շոշափում են այն կազմակերպությունների շահերը (զինվորական, հատուկ շինարարական, երկաթգիծ և այլն) նախագծերը պետք է նույնպես համաձայնեցվեն նրանց հետ:

2. Արգելվում է հաստատված ինժեներական ցանցերի ծրագծերի (տրասս) փոխումը առանց համայնքի ղեկավարի և շահագրգռված կազմակերպությունների հետ համաձայնեցման: Ծրագրերի տարաձայնությունների վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվում համայնքապետարանի համապատասխան հարցերի հանձնաժողովի կողմից:

Համաձայնեցված նախագծերը ուժի մեջ են երկու տարվա ընթացքում: Անկախ դրանից յուրաքանչյուր նախագծով կատարվող ինժեներական ցանցերի տեղակայման վերակառուցման աշխատանքները, որոնք կապված են հողաձածկի, ասֆալտի և բարեկարգ այլ տարածությունների հետ աշխատանքները սկսելուց առաջ պետք է ունենալ համայնքապետարանի թույլտվությունը:

Առանց համայնքապետարանի հետ համաձայնեցնելու, հողային աշխատանքները կարող են կատարվել սեփական տարածքում կամ օտարման գոտիներում, դրանց ինժեներական կառուցվածքների տնօրինող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների պատասխանատվությամբ, եթե դրանք չեն

պահանջում 8-1 կետում նշված ծառայությունների համաձայնությունը, չեն խախտում որևէ մեկի իրավունքները:

Անհատ քաղաքացիներին առանձին վթարների դեպքում թույլատվությունը տրվում է համայնքապետարանի կողմից, 8-1 կետում նշված կազմակերպությունների համաձայնության և առաջադրած տեխնիկական պայմանի հիման վրա:

Թույլտվությունները տրվում են պատվիրատու կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին, անմիջապես աշխատանք կատարողներին, որը ուժի մեջ է վերջինների համար նշված տեղամասի, աշխատանքի ձևի, ծավալի և ժամանակաշրջանի նշումների դեպքում:

Կարմիր գծերի սահմաններում (փողոցների և թաղամասերի անցումները) ստորգետնյա ինժեներական ցանցերի շինարարության կամ վերանորոգման աշխատանքների կամ վերանորոգման աշխատանքների թույլտվություններն ստանալու համար համայնքապետարանին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

Ճանապարհաձածկույթի, ինժեներական ցանցերի տեղակայման, վերանորոգման թերությունների ակտ, նշելով ճանապարհաձածկույթի և ինժեներական կառույցների առկա վիճակը և վերանորոգման չափերն ու ծավալները:

Ծրագրի նախագիծը, համաձայնեցված ճարտարապետական բաժնի և 8-1 կետում նշված շահագրգռված կազմակերպությունների հետ:

Կապալառու կազմակերպության կնիքով համաձայնեցված պլան:

Կապալային կազմակերպության հետ պայմանագիր չունեցող կազմակերպությունները բարեկարգման կառույցների վերանորոգման համար պետք է ներկայացնեն երաշխավորագիր-նամակ, ստորագրված պետի և հաշվապահի կողմից:

Աշխատանքի կատարման պատվերները նախօրոք քննարկվում են քաղաքաշինության հանձնաժողովի կողմից, և նրա որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որտեղ նշվում են նաև աշխատանքների կատարման ժամկետները:

Աշխատանքների կատարման թույլտվությունները տրվում են սահմանված վճարները մուծելուց հետո:

Ստորգետնյա և վերգետնյա ինժեներական ցանցերի տեղակայման և վերանորոգման, ինչպես նաև ասֆալտի ծածկի և բարեկարգման այլ էլեմենտների վերականգման աշխատանքները պետք է կատարեն մասնագիտացված կազմակերպությունները: Աշխատանքների կատարման սկզբում պետք է ունենալ ճարտարապետական բաժնի կողմից տրվող տեղակայման արձանագրությունը կարմիր գծերի և օբյեկտների կապումով, ինժեներական կապերի տեխ պայմանի հետ միասին:

Աշխատանքների կատարման ընթացքում պատասխանատու աշխատողի ներկայությունը պարտադիր է, որն իր հետ պետք է ունենա թույլտվություն ու աշխատանքի կատարման նախագիծ:

Աշխատանքներն սկսելու նախօրյակին պետք է տեղյակ պահել ինժեներական ցանցեր ունեցող շահագրգռված կազմակերպություններին, ցանցեր ունեցող կազմակերպություններին՝ ցանցերի տեղը համատեղ ճշտելու, անհամապատասխանությունները պարզելու համար:

Աշխատանքների կատարման տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական ցանցերի փչացումից ապահովելու պատասխանատուն է այն անձը, որը ղեկավարում է աշխատանքների կատարումը: Նրանք պարտավոր են կատարելու բոլոր տեխնիկական պահանջները և կազմակերպությունների պայմանները:

Փողոցում, հրապարակներում և մյուս բարեկարգված տարածություններում ստորգետնյա ինժեներական ցանցերի խրամուղիների փորման և լցման, վերգետնյա կառույցների ժամանակ պետք է ապահովվեն հետևյալ պայմանների կատարումը:

Խրամուղու լայնությունները պետք է լինի նվազագույնը, ասֆալտի քանդումը պետք է կատարվի կտրման հատուկ մեքենաներով: Խրամուղիների ու փոսորակների պատերը համաձայն նախագծերի պետք է ամրացվեն, նրանց լցման համար պետք է օգտագործվի մաքուր հող 20սմ-ից ոչ ավելի շերտով, որը պետք է խտացվի համաձայն շինարարական նորմաների:

Ջրահոսների և հեղուկների հեռացումը խրամուղիներից և փոսորակներից պետք է կատարվի միայն դեպի անձրևատարների մեջ: Արգելվում է դրանց լցնելը երթևեկելի մաս կամ մայթի վրա:

Շինարարական, վերակառուցման կամ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պատասխանատու կատարողը պետք է :

48 ժամվա ընթացքում մաքրի վերանորոգումից հետո մնացած շինարարական մնացորդները:

Կանչել կոմունալ ծառայության կամ փողոցները, մայթերը տարածությունները տնօրինող կազմակերպություններին, ապատասխանատու անձերին, ակտով հանձնել վերանորոգված բարեկարգման կառուցվածքները և ասֆալտածածկույթը:

Քանդված մայթերի վերանորոգումը անկախ ծածկույթի ձևերից պետք է կատարվի ամբողջ գոյություն ունեցող լայնությամբ:

Փողոցի երթևեկելի մասի ասֆալտաբետոնային ծածկը վերանորոգվում է նախկին վիճակով, մինչև քանդումը կազմված հատուկ ակտի պահանջներից, խճաժածկի դեպքում խրամուղու կրկնակի լայնության չափով:

- Ասֆալտաբետոնյա ծածկույթը լրացվում է մինչև եզրաքարերը, եթե խրամուղու և նրա միջև տարածությունը փոքր է 2մ-ից:

- Վերանորոգված կառուցվածքների տնօրինող կազմակերպության առաջին իսկ պահանջով՝ մեկ տարվա երաշխավորված ժամկետում:

-Ավազապատ և հողածածկ ունեցող տարածությունների վերականգնումը կատարվում է քանդման չափով, որը պետք է հաստատվի երկկողմ ակտավորումով, մինչև աշխատանքների սկսելը:

- Կանաչ տարածությունները վերականգնվում են համաձայն կոմունալ ձեռնարկությունների և կանաչապատման ծառայության պայմանների:

-Վերգետնյա կառույցների (ցանկապատներ, հենասյուներ, ճանապարհային նշաններ և այլն) վերանորոգվում են շինարարության վերանորոգում կատարող կազմակերպությունների կամ անհատների կողմից:

-Ճանապարհածածկույթի վերանորոգման ժամկետները սահմանվում են՝ ելնելով փողոցների նշանակության և աշխատանքների ծավալից: Մագիստրալային և ինտենսիվ շարժման փողոցներում՝ 24, իսկ մյուսներում՝ 48 ժամվա ընթացքում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս պետք է հաշվի առնել սույն կետի պահանջները:

- Վերականգնված ճանապարհային ծածկույթներն ըստ պատկանելության հանձնվում են շահագործող կազմակերպություններին՝ կատարողական գծագրերի հետ միասին:

IX. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԿԱՐԳԸ

Քաղաքաշինական գործունեության վերահսկողությունն իրականացնում է քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժինը, Արմավիրի մարզպետը, որը միաժամանակ համակարգում է համայնքի ղեկավարների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում:

Փամբակ համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելումը, կասեցնում է ինքնական շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 039-Ա

ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Լյուդվիկ Հրաչի Գևորգյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Լյուդվիկ Հրաչի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 06-019-0105-0109 կադաստրային ծածկագրով 0,1007 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության հնդավոր գործառնական նշանակության հողամասը ջերմոցային տնտեսություն հիմնելու նպատակով փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

2. Լյուդվիկ Հրաչի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 06-019-0105-0112 կադաստրային ծածկագրով 0,0978 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության հնդավոր գործառնական նշանակության հողամասը ջերմոցային տնտեսություն հիմնելու նպատակով փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

3. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -11
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 040-Ա

ԱՐՄԱՆ ՀՄԱՅԱԿԻ ԶԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով Արման Հմայակի Զալյանի դիմումը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Արման Հմայակի Զալյանին ճանապարհ ապահովելու նպատակով սերվիտուտի իրավունքով հողամաս տրամադրելու մասին՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Տալ համաձայնություն Արման Հմայակի Զալյանին ճանապարհ ապահովելու նպատակով Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-036-0496-0003 կադաստրային ծածկագրից 0,031995 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը անորոշ ժամկետով սերվիտուտի իրավունքով օգտագործման տրամադրելուն:

2. Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:


3. Առաջարկել համայնքի ղեկավար Ս.Կոստանդյանին՝ Արման Հմայակի Զալյանի հետ կնքել անորոշ ժամկետով սերվիտուտի պայմանագիր:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԺԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԼ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 041-Ա

ԼԵՎՈՆ ԳՈԳՉՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղականի ինքնակառավարման մասին“, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով Լևոն Ռազմիկի Գոգչյանի դիմումը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Լևոն Ռազմիկի Գոգչյանին և իր ընտանիքին պատկանող տնամերձ հողատարածք մուտք ու ելքի ճանապարհի ապահովելու նպատակով սերվիտուտի իրավունքով հողամաս տրամադրելու մասին՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Տալ համաձայնություն Լևոն Ռազմիկի Գոգչյանին և իր ընտանիքին պատկանող տնամերձ հողատարածք մուտքի ու ելքի ճանապարհի ապահովելու նպատակով Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0839-0001 կադաստրային ծածկագրից 0,093978 հա բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը և 06-070-0088-0029 կադաստրային ծածկագրից 0,055207 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողատեսքը անորոշ ժամկետով, սերվիտուտի իրավունքով օգտագործման տրամադրելուն:

2. Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավար Ս.Կոստանդյանին՝ Լևոն Ռազմիկի Գոգչյանի հետ կնքել անորոշ ժամկետով սերվիտուտի պայմանագիր:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 042-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Էդգար Աշոտի Ասատրյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Էդգար Աշոտի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0250-0027 կադաստրային ծածկագրով 0,412548 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը, թռչնաբուծական ֆաբրիկա կառուցելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -11
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 043-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Փամբակ համայնքի
ավագանին՝ **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու
ուլթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի
մայիսի 15-ին, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու
նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ